

1.2.5. Կապ

Հանրապետությունում 2000թ. հունվար-սեպտեմբերին, ըստ կապի կազմակերպությունների հաշվետվությունների տվյալների, բնակչությանը, հիմնարկներին, կազմակերպություններին մատուցած ծառայություններից ստացված ընդհանուր հասույթը կազմել է 27539.1 մլն. դրամ, որից հիմնական գործունեությունից՝ 25227.6 մլն. դրամ:

Կապի համակարգի հիմնական գործունեությունից ստացված փաստացի հասույթի կառուցվածքը

	2000 թ. հունվար-սեպտեմբեր	2000թ.հունվար-սեպտեմբեր 1999թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ, համադրելի գներով (տոկոսներով)
Կապի համակարգի հիմնական գործունեությունից ստացված հասույթը <i>ընդամենը մլն. դրամ</i>	25227.6 ¹	94.5
<i>դրանցից՝</i> բնակչությանը մատուցված կապի ծառայություններից ստացված հասույթը, <i>ընդամենը</i>	10723.2	98.7
<i>այդ թվում՝</i> փոստային կապից	192.0	2.5 անգամ
հեռագրային կապից	26.0	84.0

¹ Հաշվարկված է առանց ավելացած արժեքի հարկի:

	2000 թ. հունվար-սեպտեմբեր	2000թ.հունվար-սեպտեմբեր 1999թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ, համադրելի գներով (տոկոսներով)
միջազգային և ներհանրապետական հեռախոսային խոսակցություններից	6739.6	94.5
բաժանորդային վարձերից և միանվագ ծառայություններից	3616.0	102.7
ծայնային-լարային ծառայություններից	69.1	84.8
այլ ծառայություններից (այդ թվում՝ ինտերնետից և էլեկտրոնային կապից)	80.6	3.1 անգամ

Նշված հասույթից բնակչությանը մատուցված ծառայություններին բաժին է ընկել 10723.2 մլն. դրամ, որի 62.9 տոկոսը կազմել են միջազգային և ներհանրապետական հեռախոսային խոսակցություններից, 33.7 տոկոսը՝ բաժանորդային վարձերից և միանվագ ծառայություններից, 1.8 տոկոսը՝ փոստային կապի ծառայություններից ստացված հասույթը, 0.8 տոկոսը՝ այլ ծառայություններից, 0.6 տոկոսը՝ ծայնային-լարային, 0,2 տոկոսը՝ հեռագրային:

Փոստային կապ. 2000թ. հունվար-սեպտեմբերին փոստային կապի մատուցած ծառայություններից ստացված հասույթի ծավալը կազմել է 489.3 մլն. դրամ, որից բնակչությանը մատուցած ծառայություններից՝ 192.0 մլն. դրամ:

2000թ. հունվար-սեպտեմբերին գնահատված խաչկապերի և նամակների քանակը, 1999թ. հունվար-սեպտեմբերի նույն ցուցանիշի նկատմամբ, աճել է 61.9 տոկոսով, նամակների բացիկների, սովորական գնահատված ծանրոցների քանակը՝ 44.4 տոկոսով, հասարակ և պատվիրված խաչկապերի քանակը՝ 36.0 տոկոսով: Միևնույն ժամանակ միջազգային ելքային նամակների, փոստային բացիկների, խաչկապերի ծավալը աճել է 8.2 տոկոսով: Փոստային, հեռագրային դրամական փոխանցումների քանակը (առանց կենսաթոշակների) նվազել է 3.8 անգամ, բյուջեով նախատեսված ընտանեկան նպաստների վճարումների քանակը՝ 36.6 տոկոսով, ըստ ՀՀ մամուլի տարածման գործակալության տվյալների պարբերական հրատարակությունների (թերթեր, ամսագրեր) տպաքանակի իրացումը (բաժանորդագրություն և հատավաճառ)՝ 12.2 տոկոսով, կենսաթոշակների

վճարումների քանակը՝ 10.4 տոկոսով:

Հեռագրային կապ. 2000թ. հունվար-սեպտեմբերին հեռագրային կապի մատուցած ծառայություններից ստացված հասույթի ծավալը կազմել է 54.6 մլն. դրամ, որից բնակչությանը մատուցած ծառայություններից՝ 26.0 մլն. դրամ:

2000թ. հունվար-սեպտեմբերին հեռագրերի քանակը 1999թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ նվազել է 10.7 տոկոսով, այդ թվում ԱՊՀ երկրներ՝ 7.4 տոկոսով, իսկ այլ երկրներ՝ 16.7 տոկոսով: Հաղորդված 68.7 հազ. հեռագրերից 56.7 տոկոսը բաժին է ընկել ԱՊՀ երկրներին, 0.7 տոկոսը՝ այլ երկրներին, մնացածը՝ ներհանրապետական (միջազգային):

Հեռախոսային կապ. 2000թ. հունվար-սեպտեմբերին, միջազգային և ներհանրապետական հեռախոսային խոսակցությունների ծառայություններից ստացված հասույթի ծավալը կազմել է 15993.2 մլն. դրամ, որի 42.1 տոկոսը բաժին է ընկել բնակչության կողմից կատարված խոսակցություններից ստացված հասույթին: Միջազգային և ներհանրապետական հեռախոսային խոսակցությունների քանակի (41254.3 հազ.միավոր) 27.4 տոկոսը բաժին է ընկել ԱՊՀ երկրների (1999թ. հունվար-սեպտեմբերի 23.1 տոկոսի դիմաց), 3.2 տոկոսը՝ այլ երկրների հետ (նախորդ տարվա հունվար-սեպտեմբերի 2.7 տոկոսի դիմաց), մնացածը՝ հանրապետության ներսում կատարված միջազգային հեռախոսային խոսակցություններին: 2000թ. հունվար-սեպտեմբերին ԱՊՀ երկրների հետ միջազգային խոսակցությունների քանակը 1999թ. նույն ժամանակաշրջանի համեմատ ավելացել է 4.1 տոկոսով, իսկ այլ երկրների հետ ավելացել է՝ 2.9 տոկոսով:

Միջազգային և ներհանրապետական հեռախոսային խոսակցությունների **կանչերի** ընդհանուր քանակը կազմել է 95638.8 հազ. միավոր, որից ավարտվել են խոսակցությամբ՝ 40.0 տոկոսը:

Միջազգային և ներհանրապետական հեռախոսային խոսակցությունների պատվերների քանակը

	2000թ. հունվար-սեպտեմբեր	2000թ. հունվար-սեպտեմբերը 1999թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ (տոկոսներով)
Միջազգային և ներհանրապետական հեռախոսային խոսակցությունների պատվերների քանակը, հազ.հատ <i>այդ թվում՝</i>	3909.1	98.6
- Միջազգային	943.5	84.8
- Ներհանրապետական <i>որից չեն կատարվել՝</i>	2965.6	104.0
- Միջազգային	243.1	88.1
-Ներհանրապետական	643.2	103.7

Միջազգային և ներհանրապետական հեռախոսային խոսակցությունների պատվերների ընդհանուր քանակի 24.1 տոկոսը բաժին է ընկել միջազգային հեռախոսային խոսակցությունների պատվերներին (նախորդ տարվա 28.0 տոկոսի դիմաց), իսկ մնացածը՝ ներհանրապետական: Միևնույն ժամանակ միջազգային հեռախոսային խոսակցությունների պատվերներից չեն կատարվել 25.8 տոկոսը (նախորդ տարվա 24.8 տոկոսի դիմաց), իսկ ներհանրապետական պատվերներից 21.7 տոկոսը (նախորդ տարվա նկատմամբ մնացել է անփոփոխ):